ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ՝ԷԹՆՈՍ ԿԱՄ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ.....

ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ,ՊԱՏՄԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ,ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ,ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....

ՄԻՋԷԹՆԻԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....

ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ.....

ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐ, ԶԱՐԴՄՈՏԻՎԵՆՐ.....

ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽՅԱՆ ԷԹՆԻԿ ՄՇԱԿՈՒՅԹ.....

ԱՐՎԵՍՏ և ԱՐՀԵՍՏ.....

ԿԻՐԱՌՎՈՂ և ՉԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՎԵՍՏԻ ՃՅՈՒՂԵՐ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շատ Ազգաբաններ,փիլիսոփաներ,արվեստաբաններ ունեն տարատեսակ տարակարծություններ՝էթնոս և մշակույթ հասկցությունների հիման վրա:

Էթնիկական մշակույթի համակարգում ուրույն տեղն է զբաղեցնում ժողովրդական կիրառական և ոչ կիրառական արվեստին պատկանող տարրեր, որոնք ևս տարակարծությունների տեղիք են տալիս:Միաժամանակ,սակայն այն արտահայտում է ժողովրդի նյութական մշակույթը,հոգևոր ժառանգությունը,կենցաղային մշակույթը:

Ի տարբերություն արդի պրոֆեսիոնալ կիրառական արվեստի, որը զարգանում է օրեցօր և այն առհասարակ շատ ժամանակ կապ չի ունենաում էթնիկ մշակույթի հետ,էթնիկ ավանդույթներից դուրս է,ոճային, նորաձև,նորարարական,ժողովրդական արհեստները զարգանում են իրենց իսկ ճանապարհով:

Նմանատիպ աշխատանքները էապես մեծ նշանակություն ունեն և լրացնում են դասընթացին,նպաստում և խթանում են սովորողի ստեղծագործական երևակայությանն ու խթանման լավագույն միջոց հանդիսանում:

Հետազոտության արդիականությունը

Մարդու,անհատի ձևավորման,մտավոր զարգացման և հետագա ողջ կենսագործունեության հիմքերը դրվում են դեռ վաղ տարիքից,ուստի շատ կարևոր է մշակութային ուսումնադաստիարակչական ուղին հարթել և զարգացնել՝ նրանց գեղագիտական ճաշակը,համամարդկային արժեքները,ազնվությունը,աշխատասիրությունը,ճշտապահությունը ազգային գաղափարների վրա:

Հետազոտության նպատակ

Հետազոտության աշխատանքի նպատակն է բացահայտել և հիմնավորել հայ աշակերտի ազգային արժեհամակարգի,ազգային մշտական փոփոխվող իրավիճակներում անձի՝ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունների ձևավորում, անհատի ուժեղ կողմերի բացահայտում:

Մասնագիտական կողմնորոշման մատչելի մատուցում:

Անձի հետաքրքրությյունների և հնարավորությունների առաջնահերթություն, հումանիստական բնույթի և արժեքների ձևավորում:

Նպատակների հստակեցում:

Սովորողի իրազեկումը սեփական մշակույթի ,արժեքների ազգային ժառանգության և վերլուծական կարողությունների ձևավերում:

Ժողովրդական արվեստների և արհեստների ճյուղերին ծանոթացում և կիրառում:

Ժամանակակից արվեստների և էթնիկ մշակույթին պատկանող արվեստի համեմատականներ և ստեղծագործական մոտեցումներ:

Սյունիք-Արցախյան ազգային տարրերի, զարդերի,հագուստի՝տարազ համալիր,կահկարասու,խոհանոցի և իհարկե գորգերի , կարպետների պատմամշակութային արժեքներին ծանոթացում և ուսումնասիրում:

Զարդանախշերի հետազոտություն:

Կրթական համակարգի զարգացում:

Պատմական նյութի զարգացում:

Հետազոտական կարողություն սովորողի և հետազոտական աշխատանքի բովանդակություն, տեխնիկական հմտությունների ձեռքբերումներ, վերլուծություն, համեմատություն, հակադրություն, արդիականացում,փաստագրում-հիմնավորում:

Հետազոտական խնդիրները

Պրոֆեսիոնալ արվեստը բարձրացնում է շրջապատող միջավայրի գեղագիտական արժեքները , սակայն անհատի աշխարհընկալումը ժողովրդական արվեստների նկատմամբ՝ կիրառական գեղազարդումներով արտացոլում է ժողովրդի աշխարհայացքը:Զարդանախշերը, որոնք հիմնականում արտացոլանքն են ժողովրդի,առօրյա կյանքի,,կենցաղի, մշակույթի, դրանց մեջ դրսևորվում է տարբեր պատմազգագրական մարզերիԱռանձնահատկությունները:

Բնակչության տարբեր խավերի կենցաղային առօրյան արտացոլվում է հենց զարդանախշերում և արվեստի գործերում:

Ավանդույթի կայունության , պահպանման և դինամիզմի կարգավորման մեխանիզմ է հարկավոր՝ապահովելու զարգացման , նաև դիմացկունությունը որպես պատմական ժառանգություն և հարստություն՝ Ազգային էթնիկ մշակույթի:Էթնիկ մշակույթի վերլուծություն,աշակերտների հետ համագործակցային կարողությունների ձևավորում , վերլուծական մտածողություն, անհատական մոտեցումներ ,որը արդի ժամանակներում խրթին է:

Ազգային գաղափարը մշակութային ծագում ունի և այն ներառում է գաղափարախոսություն ազգային նպատակների ծիրում:Որքան պարզ և հստակ են նպատակները, որքան ուսումնասիրված և հանրայնացված է տվյալ ժողովրդական մշակույթը, այնքան առանց խոչնդոտի է ձևավորվում ազգային գաղափարախոսությունը՝գտնելով իր տեղը ազգային պետության, սահմանադրության և պետական քաղաքականության մեջ:

Պրոֆեսիոնալ արվեստը ստեղծվում է գիտելիքի և կանոնների հիման վրա, որոնք ուսուցանվում և փոխանցվում են ուսուցչից աշակերտին:

Առաջնահերթ խնդիր է դրված աշակերտ-ուսուցիչ հետազոտական աշխատանքի արդյունքում՝պետական կարևորության և մշակույթի պահպանման ուսումնասիրություն կատարելու ,համակարգման, վերանայման, դրանց հիման վրա իրական էթնիկ մշակույթի քաղաքականութուն և ծրագիր մշակելու:

.Խնդրի ներկայացում

Կերպարվեստ առարկային ներառված այս թեման՝դասավանդման հիմնական նպատակ է՝ հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումով, պետական գիտակցության, ազգային ինքնագիտակցության, սեփական դիմագիծն ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության ակունքներում , խորապատկերում:

Հիմնական նպատակներից մեկը՝ նաև անհատի հոգևորև մտավոր արժեհամակարգի ձևավորումն է և սովորողին հաղորդակից դարձնելը հոգևոր ժռանգությանը, ազգային համամարդկային, նրանց մեջ սերմանել բարոյագիտական արժեքներ՝ստեղծելով ներդաշնակ գրագետ մարդու՝ բարոյակամային հատկանիշներով , էթնիկ մշակույթը կրող և հարգող անհատի:

Արժե ունենանալ առարկա , որտեղ կդասավանդվի ազգային կերպարվեստ-ձեռարվեստ ՝նախընտրությամբ ազգայինի իրազեկմամբ:

Հմտություններ ,որոնք պետք են ցանկացած աշխատանքի դեպքում:

՝.Խոսելու կարողություն

.Մասնագիտական կապեր ստեղծելու կարողություն

.Արվեստ, արհեստ հմտություններ

.Խնդիրների լուծման կարողության

.Թիմում աշխատելու կարողություն

.Էմոցիոնալ ինտելեկտ

.Մոտիվացվելու և մոտիվացնելու կարողություն

.Սովորելու և իրազեկելու կարողություն



Հիմնարար հմտություններ

Այժմյան կրթական համակարգում , բացի ուսումից առավել քան երբևէ կարևոր է մարդկային որակական զարգացումը:

.Հնարամտություն

.Երևակայություն

.Նախաձեռնողականություն

.Համագործակցություն

.Վերլուծություն

Սովորողի կողմնորոշում

5-7-րդ դասարանների համար նախատեսված ծրագիր, անհատական ,հոգեբանական,տվյալ տարածաշրջանին համապատասխան առանձնահատկությունների բացահայտում և հոգեբանամանկավարժական դիագնոստիկ խորհրդատվություն՝ելնելով այժմեան իրավիճակից:

.Ինքնաճնաչում՝էթնիկ

.Ինքնաճանաչում ՝ես

.Ծնողների ներգրավվածություն

Ազգային արժեհամակարգի ձևավորում

Ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում էթնիկ մշակույթի , զարդանախշերի և կերպարվեստի դերն ու կարևորությունը , ինչու ոչ,նաև սեփական պատմությունից դասեր քաղելու պարտադիրություն:

Դասաժամերի ընթացքում բացահայտել սովորողի վերաբերմունքը ազգայինի , պատմականի , արվեստների և արհեստների վերաբերյալ,վեր հանել խնդիրները և իրնեց ունեցած գիտելիքները ՝վերանայելով և քննարկելով:

Սովորողի մոտիվացիան բարձրացնելու համար կիրառել և գործնականում ցույց տալ էթնիկ ժամանակաշրջանի կիրառվող արհեստների և արվեստների միջոցները՝կիրառական և դեկորատիվ կիրառական արվեստները:

Հետազոտության վարկած

Պատմություն, գրականություն,տեխնոլոգիա, կերպարվեստ փոխազդեցությունը ՝կարևոր ու անհրաժեշտ գործընթաց և կրթադաստիարակչական գործընթացի անքակտելի մաս են կազմում:



Ներդնել սովորողի ազգային արժեհամակարգի ձևվորման և զարգացման մոդել՝համամարդկային արժեհամակարգի մերժամանակյա գրագետ և կիրթանհատների ձևավորմամբ:

Հետազոտական աշխատանքի բաղադրիչներն ու կառուցվածքը

.Ինչպե՞ս տեղի ունեացավ:

.Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ:

.Ինճպե՞ս է փոփոխվել ժամանակի ընթացքում:

.Ի՞նչն է օրինաչափ:

...Ես՝Գոհարս,մեղոք լի, հոգովս տկար,նորհաս ձեռամբ իմով գործեցի, ով կարդա՝մեկ բերան ողորմի զիս,թիվ ՌՃԽԹ...

Արցախ 1699 թ.

Գորգը քառանկյուն գեղարվեստական գործվածք է, որն ունի բազմագույն զարդանախշեր:Խավածածկ կամ առանց խավի գորգերն օգտագործում են որպես ծածկոց , վարագույր,բնակարանը տաքացնելու, զարդարելու, ինչպես նաև ձայնամեկուսիչ:Գորգը հիմնականում հյուսում են թելերից:Սակայն լինում են նաև ասեղնագործ և գույնզգույն կտորներից կարված գորգեր:Գորգ և կարպետ բառերը հայերենում հոմանիշներ են,սակայն ունեն մի տարբերություն.գորգերը թելախավով են,իսկ կարպետները՝ոչ:

«Գորգ»բառն առաջին անգամ հիշատակվում է Տավուշի կապտավանք եկեղեցու պատին եղած արձանագրություններից մեկում,1242-1243թթ,իսկ «կարպետ»բառը ՝5-րդ դարի Ավետարանում՝գրաբարյան կարպետ ձևով:

Սովորողը ուսումնասիրում է ծագումնաբանությունը՝գորգ բառի ծագումնաբանության մասին երկու կարծիք կա.մեկն այն է,որ գորգ բառը պատկանում է խեթերենի բառաֆոնդին և հիշատակվում է «kurka»ձևով, իսկ մյուս կարծիքը հաստատում է , որ գորգ բառը հայկական ծագում ունի և նշանակում է նախշ:

ԳՈՐԳԵՐ

.Սովորողը առերեսվում է պատմական ակնարկների հետ

Հայոց ցեղասպանությունից հետո փրկված որբերի գործած գորգը , որը 2015 թ.ցուցադրվել է Սպիտակ տան այցելուների սրահում:

1915թ.,Հայոց ցողասպանության ժամանակ բազմաթիվ գորգեր կորսվել են:Դրանց որոշ մասը վաճառվել է շուկաներում՝ի վերջո հայտնվելով Արևմուտքում՝անհատների հավաքածուներում կամ կենցաղային օգտագործման նպատակով:

1921թ. Խորհրդային Ադրբեջանին բռնի միցնելուց հետո, Արցախում սկսվել է հայաթափման լայնածավալ ծրագրի իրականացում, որից տուժել է նաև հայկական գորգերը:Հատկպես 1960-70-ական թթ.Բաքվից հատուկ հրահանգներով ուղարկված առանձին գործակալներ շրջել են Ղարաբաղի հայկական գյուղերով և բնակչությունից հավաքել հին ձեռագործ գորգերը՝դրանց դիմաց հանձնելով գործարաններում արտադրած նոր ու արժեք չունեցող գորգեր:

Սովորողի հետ ՝հատնտիր պատմություն՝Շուշի քաղաքում բնակվող տարեց կանանց կյանքից,գորգերի պատմություն,իրական:

Սա հայերին՝խաբեության և թալանի դրսևորում էր:Նաև այդպիսի քաղաքականության շնորհիվ Բաքվում ստեղծվել է գորգի թանգարան,որով Ադրբեջանն այսօր ներկայանում է աշխարհին

որպես գորգագործական հին մշակույթ ունեցող ժողովուրդ:

.Իրազեկում սովորողին

Թերևս Լոնդոնյան շատ հանրաճանաչ աճուրդ-վաճառք ցուցահանդեսներում մեծամասամբ մեր հայկական գորգերն են ՝հայկական զարդանախշերով ու զարդամոտիվներով, սակայն ներկայացվում են Ադրբեջանական:

Պազիրիկ գորգ

Պազիրիկ գորգ,հայտնաբերված ամենահին գորգն է:Թվագրվում է մ.թ.ա.5-րդ դար:Ներկված է հայկական Որդան կարմիրով,Էրմիտաժ՝Ռուսստան:

Նախաքրիստոնեական ժամանակաշրջանի գորգարվեստի ամենահայտնի նմուշը Ք.ա.թվագրվող Պազիրիկ կոչվող գորգն է , որը հայտնաբերվել է 1949 թ.Լեռնային Ալթայի Պազիրիկ Կուրգանի թիվ 5 դամբարանից:

ՈՒսումնասիրողներ ՈՒրլիխՇուրմանը, Ֆոլկմար Գանցհոռնը և այլոք կարծում են ,որ Պազիրիկ գորգը գործել են Վանի թագավորությունումն, որ այն պետք է վերագրել հայկական մշակույթին:

Հայկական գորգերը պատկերվել են նաև ԵՎրոպԱական գեղանկարչության մեջ՝սկսած դեռևս Վերածննդի դարաշրջանից:Դրանց լավագույն օրինակներից են Ջոտտոյի «Մոգերի երկրպագությունը»,որմնանկարները,Լորենցետի Ամբրոջիոյի «Աստվածամայրը գահի

վրա»,Անդրէա Մանտենեայի «Աստվածամայրն ու Սուրբ Զենոնը»,որմնանկարներ,Կարավաջոյի «Ընթրիք Էմմաուսում»կտավներ և այլն:

Գրիգոր Խանջյան «Անահիտ»1956թ.

Գորգերի և կարպետների մասին բազմաթիվ հիշատակություններ են պահպանվելհայկական բանավոր ավանդազրույցներում, հեքիաթներում,երգերում և «Սասունցի Դավիթ» էպոսում:

.Գրականության թեմաներ

Այսպես ,օրինակ՝Ղազարոս Աղայանի Անահիտ հեքիաթի հերոսուհին՝համբերատար ու բանիմաց գեղեցկուհի Անահիտը Վաչագան թագավորին արհեստ գնահատել է սովորեցնում:

Վաչագանը հանուն սիրած աղջկա դառնում է գորգագործ և պարտության մատնում թագավորության չար ուժերին:Ի վերջո արքան այն մարդը չէ,որը թագավորում է , այլ այն մարդն է , որը արարել ու կառուցել գիտի:

…Ինչպես հեքիաթի հերոսուհին է ասում.»Մենք ընդամենը նախշ ենք կարպետի, այսօր արքա ես,վաղը ով գիտի...»

Իլյուստրացիաները ավելի պատկերավոր են դարձնում սովորողի պատկերացումներն ու զգացողությունները՝ գունային ու առավել հագեցած ներկապնակը ազդեցիկ ու դյուրին է դարձնում աշխատանքային ընթացքն ու ընկալումը նյութի:

Բնականաբար գորգը հաճախ պատկերվել է նաև հայ նկարիչների կտավներում:

Վ.Սուրենյանց «Խրիմյան հայրիկի դիմանկարը»

Սարգիս Մուրադյան «Վերջին գիշերը»

Փանոս Թերլեմեզյանի Կոմիտասի դիմանկարում հեղինակը, որպես գունային կոմպոզիցիայի կարևոր տարր,օգտագործել է գունագեղ գորգը, որն ի դեպ այժմ պահվում է Կոմիտասի թանգարան-ինստիտուտում:



Փանոս Թերլեմեզյանի ստեղծած կտավում Կոմիտասը նստած է այն գորգի վրա , որը եղել է դեռ Կոմիտասի ծնողից շատ առաջ:Այն Կոմիտասի մայրը `Թագուհին հայրական տնից էր օժիտ բերել:

Գորգը լիարժեքորեն ներդաշնակվել է նաև նատյուրմորտի ժանրում:Գ.Խանջյան «Լավաշ»,«Նկարչի արվեստանոցում» ,Մարիամ Ասլամազյանի նատյուրմորտներում և այլն:

Նյութի տեխնոլոգիա և ներկանյութի ստացումը սովորողի հետ

Պազիրիկ գորգի ծագումը լեռնաշխարհի հետ կապելու հարցում կարևոր փաստ է նրա կարմիր ներկանյութում Արարատյան դաշտի որդան կարմիրի առկայությունը,որը բացահայտելեն Սանկտ Պետերբուրգի `Էրմիտաժի մասնագետները:

Հայկական գորգերի կարմիր գույնը `որդան կարմիր ներկանյութը ստացվել է Արարատյան դաշտերում աճող բույսերի և դրանց արմատների վրա ապրող կարմրագույն միջատից:

Արաբ պատմիչները նշում են , որ ժամանակին ԵՎրոպական շուկաներում ամենաարժեքավոր գորգերը հայկական գորգերն էին, որովհետեև դրանք պատրաստված էին բարձրորակ բրդով և ներկված դիմացկուն որդան կարմիր ներկանյութով, վերջինիս պատճառով հայկական գորգերը հայտնի էին արաբական աշխարհում «կրմզ» կամ կարմիր անվանումով:

Միջատ և ներկանյութ

Հայկական մանրանկարչությունում և որմնանկարներում հաճախ կարելի է հանդիպելԱստվածամորը, Քրիստոսին, ավետարանիչների և սրբերի`պատկերված գորգերով, բարձերով կամ ձեռագործ ծածկոցներով:Եկեղեցու խորանները, խաչքարերի բարդ հյուսվածքներ միջնադարյան հայկական ձեռագրերում հանդիպող վարդյակները կրկնում են գորգերի և կարպետների զարդանախշերը:Հայկական գորգեր պատկերել են նաև 13-14-րդ դրի եկեղեցիների շքամուտքերին:

Բարձրաքանդակ,Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցի ,X դար

Գոշավանք, Ասեղնագործ խաչքար

.Ոսկերչություն

Ականջողակաթիլ,քունքազարդի նմանությամբ՝Շուշի, Արցախ,19-րդ դար

Գինդերը կամ ականջողերը կանանց գլխի հարդարանքի անբաժան մասն են և հայտնի են վաղնջական ժամանակներից:Որպես հուռութք,ապա զարդ որոնք ավանդաբար հասել են միջնադար:

Ներկայացվող ականջողերը պատրաստված են Սյունիք-Արցախյան կեռազարդի այն հատվածի նմանությամբ, որոնք ամրացվում էին անմիջապես գլխաշորին:Ականջողերը արծաթյա են , և ցանցազարդման «ֆիլիգրան» եղանակով կատարված:

Արցախի ոսկերչությունը ընդգրկուն գաղափար է, դրանց մեջ մտնում է ,ոչ միայն ոսկուց և այլ մետաղներից պատրաստված զարդերը, այլ նաև կիրառական տարաբնույթ նմուշներ՝ եկեղեցական սպասք,զենք և այլն:

Սովորողն ուսումնասիրում է ազգերին բնորոշ հագուստները, դրանց բնորոշող տարազները և դրանց մեջ ներառված զարդամոտիվները:

Աշխարհում կողք կողքի բազմաթիվ ժողովուրդներ են ապրում:Նրանք տարբերվում են միմյանցից ոչ միայն լեզվով ու ապրելակերպով,այլև իրենց ազգային հագուստով:

.Ի՞նչ է տարազը...

.Ի՞նչ է իրենից ներկայացնում տարազ հագուստի համալիրը...

Սովորողի հետ հետազոտություն և ուսումնասիրում

Սյունիք-Արցախյան ազգային տարազ, հայկական ազգային տարազի բաղկացուցիչ մաս, որը պահպանեվեց մինչև 20-րդ դարի վերջ և ուներ տարածման լայն շրջան՝ընդգրկելով Սյունյաց և Արցախի լեռնային գոտիները:

Հագուստ համալիր, որը երկու տեսակով էր՝հայավարի և քաղքավարի:

Հայավարին տարածաշրջանին հատուկ ավանդական տարազն էր, իսկ քաղքավարին ՝Երևանի և Թիֆլիսի հայ կանանց տարազի որոշ մասերի ընդօրինակված տարբերակը,որը հիմնականում արտահայտվում էր գլխի հարդարանքի ձևերում և ներմուծված լինելով շուտ էլ դուրս մնաց գործածությունից:

Ցուցադրություն , հագուստ հմալիր՝Սյունիք-Արցախյան տարազ

Իլյուստրացիաներ՝դասապրոցեսից…Հավելված, նկարներ դասապրոցեսից…

Ցուցադրության ընթացքում հետևում ենք դասարանի կառավարմանը, դասապրոցեսի մթնոլորտին, ուսումնական մոտիվացիային,մեթոդական բազմազիտակության և նյութի ըմբռնումը՝արդյունավետ ուսումնական պրոցես ստեղծելով:

Միջառարկայական կապերի ապահովման միջոցով ներառում և բազմազանություն ապահովող աշխատանքների իրականացում:

Շարունակելով քննարկել Արցախյան տարազի ինքնության մասին՝ցուցադրում սեփական պատամական զարդը՝Արցախի բոժոժները,սովորողին ավելի ենք մոտեցնում իրականին, սեփական պատմությանն ու ակունքներին:

Տարազը կամ ազգայի հագուստը յուրաքանչյուր ազգի հոգևոր և մշակույթային ժառանգության կարևոր մասն է ,որն ամփոփվում է էթնոսի ինքնատիպությունն ու ազգային խառնվածքի ռանձնահատկութնունները:Լինելով կեսնապահովման միջոց և կենսակերպի անբաժան մաս ՝ տարազները նաև գեղարվեստի նմուշներ են , ազգային մտածելակերպի խորհրդանիշ:

Տարազը համարվում է յուրատեսակ այցեքարտ, քանի որ տեղեկատվություն է փոխանցում կրողի սոցիալական դիրքի և պատմական ժամանակաշրջանի մասին:

Ազգային տարազները հագուստի համալիրներ են , որոնք բաղկացած են ներքնազգեստից, վերնազգեստից,գլխի հարդարանքից ,արդուզարդից և ագանելիքից՝գուլպա,ոտնաման,փաթաթան,առնապան:

Ծնունդ առնելով դարերի խորքից՝Արցախյան տարազը գոյտնել է մինչև 20-րդ դարի վերջը՝հիմնականում տարեց կանանց մոտ:

Արցախյան հին տարազի մասին պատկերացում կազմելու համար ուշագրավ են 12-րդ դարից սկսսկած խաչքարային, իսկ15-րդ դարից՝տապանային պատկերաքանդակների ուսումնասիրությունները:

Արցախյան կանանց տարազի համալիրն առանձնանում է ձևածքի կատարելության և գունային ներդաշնակ լուծումներով:Երիտասարդ աղջիկների ու կանանց հագուստներում հաճախ են կարմիր, կանաչ իսկ հասուն տարեց կանանց մոտ՝կարմիր-կապույտ,կարմիր-մանուշակագույն երանգների զուգորդումներով:

Գույների նմանօրինակ ընտրությունը պատահական չէ,նախ կարմիր, կապույտ, կանաչ ներդաշնակ համադրումները բնորոշ են մեր ավանդական զարդարվեստին:

Կանանց ճակատը զարդարում ճակատնոցով՝ «թափա»,որի վրա մի շարք արծաթյա , հարուստ խավի դեպքում՝ոսկյա կամ ոսկեջրած դրամներ էին կախվում:

Ճակատնոցի համար ընտրում էին թավշյա գեղեցիկ կտոր, որը երբեմն զարդանախշվում էր:Արցախյան տարզը սակավ էր զարդանախշում ասեղնագործական հարուստ նախշերով:Ասեղնագործել են միայն վարտիքի եզրերը, շապիկի կուրծքը, ճակատնոցը,գլխի ծածկոցները:Գլխի հարդարանքը լրացնում էր նաև քունքակալներով, որը եռանկյունաձև ականջակալներ էին՝վրան արծաթե բոժոժների շարան:

Կանացի զարդերին՝ճակատնոցներ,քորոցներ,քունքակալներ, ոսկե մատանիներ,արծաթե գոտիներ,հմայիլ-պահպանակներ,բոժոժներ, սրանց մեծ նշանակություն է տրվել:

Գեղագիտական ձևից բացի զարդն ունեցել է պաշտպանական և հմայական նշանակություն:

Ցավոք , կապված արտաքին և ներքին քաղաքական գործընթացների, հարևան երկրների հետ ունեցած փոխառնչությունների և ժամանակի այլ մարտահրավերների հետ՝Արցախյան ազգային տարազը 20-րդ դարավերջին դուրս մղվեց կենցաղից՝դառնալով թանգարանային նմուշ,կինոյի,ազգագրական երգարվեստի և պարարվեստի բեմական հգուստ:

Նախընտրելի կամ գերադասելի ոճ՞.....

Վստահ ենք , որ ավանդական տարազի տարրերը վերակագնելու և նորովի մատուցելու համար պետք է այն արդիականացնել՝դուրս հանելով թանգարաններից:Ողջունելի է այն փաստը, որ արդեն իսկ բազմաթիվ ոճաաբաններ,իրենց աշխատանքներում՝հագուստներ, տարրեր,լայնորեն կիրառում են դրա բաղադրիչները:

Համաշխարհայնացման այս ժամանակաշրջանում և հատվածում ,երբ աշխարհը գնում է ազգային արժեքների ետմղման գործընթացի, առվել քան երբեք կարևոր են մեր ազգային արժեքների և մշակութային հարստության պահպանումն ու փոխանցումը սերունդներին:

ՈՒսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են՝ կերպարվեստի դասաժամերին կազմակերպել մյուս առարկաների միմյանց կապը:Դասը առավել հետաքրքիր ու արդյունավետ

է դառնում,երբ մի առարկան համագործակցում է մյուսի հետ:Կերպարվեստը սերտորեն կապված է բնագիտական և հումանիտար առարկաների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հայկականսովետական հանրագիտարան,ՀՍՍՀ ԳԱ 1977

2.Աշխունջ Պողոսյան, Հայոց գորգագործական մշակույթ, Պատմազգագրական ուսումնասիրություն

3.Նարեկածին ոսկերչության կենտրոն

4.Հայաստանի պատմության թանգարան

5.Տերյան մշակույթային կենտրոն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

(առարկա)

ԹԵՄԱ՝ ԷԹՆԻԿ ՄՇԱԿՈՒՅԹ՝ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ,ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏՆԵՐ,ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽՅԱՆ ՏԱՐԱԶԱԽՈՒՄԲ:

Կազմեց՝ ՆԱԶԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ

(անուն, ազգանուն, հայրանուն)

Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ ՅՈԹ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼԱՅԱՆ

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023